Հաշվետվություն

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության փորձագետ Մկրտիչ Խաչատրյանի

Ըստ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի նպատակների՝ հայտնում եմ, որ 2025թ. հունիսի երեքից 2025թ. դեկտեմբերի երեքն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ հիմնական աշխատանքները.

- Անձնական տվյալներ մշակողներին եւ անձնական տվյալների սուբյեկտներին տրամադրվել է անձնական տվյալների մշակման վերաբերյալ խորհրդատվություն (որպես խորհրդատվություն է դիտվում նաև իրականացված ուսուցումը)՝ կապված տեղեկատվական անվտանգության, անձնական տվյալների առցանց պաշտպանության եւ նմանաբնույթ այլ հարցերի վերաբերյալ:

  Իմ կողմից տրամադրված խորհրդատվությունը վերաբերում է հիմնականում հետեւյալ թեմաներին.

  - սոցիալական ցանցերում ինքնության գողության և քաղաքացիների նկարների գողության ու դրանք կայքից հեռացնելու վերաբերյալ

  - Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ,

  - Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի կիրառման վերաբերյալ (առցանց տիրույթում),

  - Համացանցում կեղծ (fake) էջերը հեռացնելու վերաբերյալ,

  - Հավելվածների օգտագործման վերաբերյալ,

  - Կիբեռանվտանգության եւ համացանցային հիգիենայի վերաբերյալ:

- **հրապարակել եմ մի շարք խորհրդատվական նյութեր ու տեսանյութեր Ֆեյսբուք սոցիալական ցանցում տարածված խաբեությունների վերաբերյալ:**
- **Գործակալության Ֆեյսբուքյան էջում հրապարակվել է շուրջ 20 իրազեկող նյութ Գործակալության վարույթների, խորհրդատվությունների վերաբարյալ, ինչպես նաև տվյալների հետ ճիշտ վարվելու կանոնների մասին խորհրդատվական նյութեր, համցանցում տարածված վիրուսներից զերծ մնալու մասին հայտարարություններ:**
  - **Մասնակցել եմ ռեեստրի վարման էլեկտրոնային մասի ապահովման աշխատանքներին:**

- ***Հարցազրույց «Հանրային հեռուստաընկերությանը»՝ տվյալների արտահոսքի վերաբերյալ***
- ***Մասնակցություն «Communication Capacity-Building Course for Representatives of the Ministry of Justice of the Republic of Armenia»***
- ***Մասնակցություն « Ideation Lab: AI governance in Armenia:***

- փորձագետը վարել է Գործակալության էջերը սոցիալական ցանցերում

Գործակալությունն ունի **Ֆեյսբուքյան էջ**՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն / Armenian PDPA անվանմամբ հետեւյալ հղմամբ՝ (https://www.facebook.com/PersonalDataArmenia/):

Սույն հաշվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ.

- Գործակալության էջն ունի 16000-ից ավելի բաժանորդ,

- Հրապարակման լուսաբանումը՝ post reach (այն մարդկանց ունիկալ թիվը, ովքեր տեսել են էջի գրառումները 6 ամսվա ընթացքում կազմել է ավելի քան 130,000),

- էջում իրականացվել է բովանդակային շուրջ 20 հրապարակում (տեղեկատվական նյութ, հայտարարություն եւ այլն),
- էջի միջոցով տրամադրվել է գրագրություն (հիմնականում առցանց խորհրդատվություն):
- Գործակալության խումբը Ֆեյսբուքում ունի 400-ից ավելի մասնակիցներ: Խումբն օգտագործվում է իրազեկման ու առցանց ուսուցումներ կազմակերպելու համար:

-հաշվի առնելով քաղաքացիների ներկայացվածությունը Instagram հարթակում Գործակալությունն ունի հաշիվ նաև այս սոցիալական ցանցում:

Անձնական տվյալների պաշտպանության
գործակալության փորձագետ Մկրտիչ Խաչատրյան

03.12.2025թ.